ՀԱՐՑԱՇԱՐ
ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

Հարց 1. Հայաստանի Հանրապետությունը՝

✓ ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

(ՀՀ Սահմանադրություն, 1-ին հոդված)

Հարց 2. Հայաստանի Հանրապետությունում ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է՝

✓ ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

(ՀՀ Սահմանադրություն, 2-րդ հոդված)

Հարց 3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում՝

✓ չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ:

(ՀՀ Սահմանադրություն, 195-րդ հոդված)

Հարց 4. Ընտրելու և ընտրվելու իրավունք չունեն՝

✓ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձինք:

(ՀՀ Սահմանադրություն, 48-րդ հոդված, մաս 4)

Հարց 5. Հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն՝

✓ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձինք:

(ՀՀ Սահմանադրություն, 48-րդ հոդված, մաս 4)

Հարց 6. Ընտրելու և ընտրվելու իրավունք չունեն՝

✓ դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

(ՀՀ Սահմանադրություն, 48-րդ հոդված, մաս 4)

Հարց 7. Հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն՝

✓ դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

(ՀՀ Սահմանադրություն, 48-րդ հոդված, մաս 4)

Հարց 8. Ընտրվելու իրավունք չունեն՝

✓ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

(ՀՀ Սահմանադրություն, 48-րդ հոդված, մաս 4)

Հարց 9. Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրություններն անցկացվում են՝

✓ ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

(ՀՀ Սահմանադրություն, 7-րդ հոդված)

Հարց 10. Ազգային ժողովի ընտրություններին ընտրելու իրավունք ունեն՝

✓ Ազգային ժողովի ընտրության օրը տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիները:

(ՀՀ Սահմանադրություն, 48-րդ հոդված)

Հարց 11. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

✓ անկախ պետական մարմին է:

(ՀՀ Սահմանադրություն, 194-րդ հոդված)

Հարց 12. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում՝

✓ Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, հանրաքվեների օրինականության նկատմամբ:

(ՀՀ Սահմանադրություն, 194-րդ հոդված)

Հարց 13. Ընտրական հանձնաժողովների համակարգը, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են՝

✓ Ընտրական օրենսգրքով:

(ՀՀ Սահմանադրություն, 194-րդ հոդված)

Հարց 14. Հանրաքվեներն անկացվում են՝

✓ ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

(ՀՀ Սահմանադրություն, 7-րդ հոդված)

Հարց 15. Ընտրական հանձնաժողովներն իրենց լիազորություններն իրականացնում են հետևյալ սկզբունքների հիման վրա՝

✓ օրինականության, կոլեգիալության և հրապարակայնության:

(Ընտրական օրենսգիրք, 36-րդ հոդված, 5-րդ մաս)

Հարց 16. Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները և տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետները կարող են ընդգրկվել իրենց ընտրական տեղամասի՝ ըստ գտնվելու վայրի ընտրողների ցուցակում՝

✓ իրենց դիմումի հիման վրա:

(Ընտրական օրենսգիրք, 10-րդ հոդված, մաս 4)

Հարց 17. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ներկայացված պահանջով՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկն իրականացվում է՝

✓ որոշումն ստանալուց անմիջապես հետո:

(Ընտրական օրենսգիրք, 50-րդ հոդված, մաս 8)

Հարց 18. Ո՞ր դեպքում է ընտրական հանձնաժողովը շարունակում վերահաշվարկը ժամը 18.00-ից հետո՝

✓ եթե չի ավարտել արդեն սկսած վերահաշվարկը:

(Ընտրական օրենսգիրք, 50-րդ հոդված, մաս 6)

Հարց 19. Եթե տեղամասում քվեարկության կտրոնների թիվը պակաս է ինքնասոսնձվող դրոշմանիշը փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին հանձնված և օգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերի թվից, ապա ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը՝

✓ հանձնաժողովի համապատասխան անդամի տվյալները և գրանցամատյանի համապատասխան էջի պատճենը ներկայացնում է իրավապահ մարմիններին:

(Ընտրական օրենսգիրք, 74-րդ հոդված, մաս 6)

Հարց 20. Եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա համապատասխան ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում՝

✓ առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումները:

(Ընտրական օրենսգիրք, 142-րդ հոդված, մաս 1)

Հարց 21. Ե՞րբ է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշում ընդունում ընտրություններն անվավեր ճանաչելու մասին՝

✓ եթե ընտրությունների վերաքվեարկություն անցկացնելու ընթացքում տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

(Ընտրական օրենսգիրք, 118-րդ հոդված, մաս 4)

Հարց 22. Ի՞նչ տվյալների հետ է համադրվում ընտրողներից ստացված քվեարկության կտրոնների թվի և չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերի թվի գումարը՝ առաջին անճշտությունը հաշվարկելիս՝

✓ տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված ինքնասոսնձվող դրոշմանիշերի թվի հետ:

(Ընտրական օրենսգիրք, 72-րդ հոդված, մաս 1)

Հարց 23. Քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակով քվեարկության դեպքում՝ որտե՞ղ է գրանցվում ընտրողի անձը հաստատող փաստաթղթի համարը՝

✓ քվեարկության օրը կազմվող՝ ընտրողների լրացուցիչ ցուցակում:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 10)

Հարց 24. Ի՞նչ տվյալ է գրանցվում քվեարկության օրը կազմվող՝ ընտրողների լրացուցիչ ցուցակով քվեարկելու դեպքում՝

✓ ընտրողի անունը, հայրանունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը:

(Ընտրական օրենսգիրք, 66-րդ հոդված, մաս 10)

Հարց 25. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և քարտուղարն ընտրվում են՝

- ✓ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմից:

(Ընտրական օրենսգիրք, 43-րդ հոդված, մաս 12)

Հարց 26. Ո՞ր հանձնաժողովն է իրականացնում ընտրողների ցուցակների սկանավորումը՝

- ✓ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

(Ընտրական օրենսգիրք, 73-րդ հոդված, 3.1-րդ մաս)

Հարց 27. Ո՞վ չի կարող ներկայացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի թեկնածու՝

- ✓ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 2)

Հարց 28. Ո՞ր մարմնի որոշմամբ են նշանակվում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը՝

- ✓ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 4)

Հարց 29. Տեղամասային կենտրոնների ցանկը՝ ըստ գտնվելու վայրի, ինչպես նաև տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների բնութագրերը հաստատում է՝

- ✓ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

(Ընտրական օրենսգիրք, 18-րդ հոդված, մաս 2.1)

Հարց 30. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուի գրանցումը մերժելու կամ անվավեր ճանաչելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել՝

- ✓ վարչական դատարան:

(Ընտրական օրենսգիրք, 112-րդ հոդված, մաս 1)

Հարց 31. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի՝

- ✓ երեքից:

(Ընտրական օրենսգիրք, 43-րդ հոդված, մաս 2)

Հարց 32. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների (բացառությամբ՝ Երևանի) ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակները գրանցում է՝

- ✓ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

(Ընտրական օրենսգիրք, 131-րդ հոդված, մաս 1)

Հարց 33. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների (բացառությամբ Երևանի) ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական

ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում՝

✓ քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:

(Ընտրական օրենսգիրք, 127-րդ հոդված, մաս 4)

Հարց 34. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը համայնքի ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումը ներկայացնում է՝

✓ մարզպետին որոշումն ընդունելուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

(Ընտրական օրենսգիրք, 119-րդ հոդված, մաս 8)

Հարց 35. Թեկնածուի գրանցումն անվավեր է ճանաչվում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների՝

✓ առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:

(Ընտրական օրենսգիրք, 111-րդ հոդված, մաս 1)

Հարց 36. Երբ է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ամփոփում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները՝

✓ քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում:

(Ընտրական օրենսգիրք, 74-րդ հոդված, մաս 1)

Հարց 37. Հանրաքվեի դրված ակտն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել՝

✓ հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների մեկ քառորդը:

(ՀՀ Սահմանադրություն, 207-րդ հոդված)

Հարց 38. Հանրաքվե չի անցկացվում՝

✓ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

(ՀՀ Սահմանադրություն, 208-րդ հոդված)

Հարց 39. Հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները՝

✓ կարող են փոփոխվել՝ միայն հանրաքվեով:

(ՀՀ Սահմանադրություն, 204-րդ հոդված, մաս 2)

Հարց 40. Միայն հանրաքվեի միջոցով ընդունվում է՝

✓ Սահմանադրությունը:

(ՀՀ Սահմանադրություն, 202-րդ հոդված, մաս 1)

Հարց 41. Քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը հաստատում է՝

✓ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

(ՀՀ Սահմանադրություն, 204-րդ հոդված, մաս 1)

Հարց 42. Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների թիվը չպետք է պակաս լինի՝

✓ համայնքի ավագանու անդամների՝ Ընտրական օրենսգրքով սահմանված մանդատների թվի 1/3-ից:

(Ընտրական օրենսգիրք, 130-րդ հոդված, մաս 2)

Հարց 43. Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների թիվը չի կարող գերազանցել՝

✓ համայնքների ավագանիների անդամների մանդատների թվի համար Ընտրական օրենսգրքով սահմանված թվի եռապատիկը:

(Ընտրական օրենսգիրք, 130-րդ հոդված, մաս 2)

Հարց 44. Կուսակցության ընտրական ցուցակում կարող են ընդգրկվել նաև այդ կուսակցության անդամ չհանդիսացող անձինք, որոնց թիվը չի կարող գերազանցել՝

✓ այդ ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թվի 30 տոկոսը:

(Ընտրական օրենսգիրք, 130-րդ հոդված, մաս 2)

Հարց 45. Համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցելու մասին կուսակցության դիմումին կից ներկայացվում են՝

✓ կուսակցության կանոնադրության պատճենը, բոլոր էջերը՝ կնքված և ստորագրված լիազոր ներկայացուցչի կողմից:

(Ընտրական օրենսգիրք, 130-րդ հոդված, մաս 3)

Հարց 46. Համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցելու մասին կուսակցության դիմումին կից **ՉԵՆ** ներկայացվում՝

✓ կուսակցության հիմնադիր համագումարի որոշումները, բոլոր էջերը՝ կնքված և ստորագրված լիազոր ներկայացուցչի կողմից:

(Ընտրական օրենսգիրք, 130-րդ հոդված, մաս 3)

Հարց 47. Համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցելու մասին կուսակցության դիմումին կից ներկայացված փաստաթղթերի թերի լինելու դեպքում՝

✓ ընտրական հանձնաժողովն ընդունում է ներկայացված փաստաթղթերը և 48 ժամ է տալիս կից ներկայացված փաստաթղթերը լրացնելու համար:

(Ընտրական օրենսգիրք, 130-րդ հոդված, մաս 5)

Հարց 48. Ընտրական հանձնաժողովի անդամների կողմից կուսակցության ընտրական ցուցակի գրանցման վերաբերյալ առարկություն չլինելու դեպքում՝

✓ ընտրական ցուցակը գրանցվում է առանց քվեարկության:

(Ընտրական օրենսգիրք, 131-րդ հոդված, մաս 2)

Հարց 49. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը ճանաչում է անվավեր, եթե՝

✓ գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը կեղծված են:

(Ընտրական օրենսգիրք, 133-րդ հոդված, մաս 1)

Հարց 50. Կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը մերժելու, գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու մասին համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշումը՝

- ✓ կարող է բողոքարկվել վարչական դատարան:

(Ընտրական օրենսգիրք, 134-րդ հոդված, մաս 1)

Հարց 51. Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումն ընտրական հանձնաժողովի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝

- ✓ կուսակցության գործունեությունը կասեցվել կամ արգելվել է:

(Ընտրական օրենսգիրք, 135-րդ հոդված, մաս 1)

Հարց 52. Ե՞րբ և ինչպե՞ս է զորամասի հրամանատարը զորամասում հաշվառված ընտրողների ցուցակները տրամադրում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին՝

- ✓ քվեարկության օրվանից 3 օր առաջ՝ փակ և կնքված ծրարով:

(Ընտրական օրենսգիրք, 12-րդ հոդված, մաս 4)

Հարց 53. Ի՞նչ կարգով կարող է փոփոխվել ընտրական տեղամասի ընտրողների առավելագույն թիվը

- ✓ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի առաջարկությամբ

(Ընտրական օրենսգիրք, 16-րդ հոդված, մաս 3)

Հարց 54. Ի՞նչ նպատակով կարող է փոփոխվել ընտրական տեղամասի ընտրողների առավելագույն թիվը՝

- ✓ Ընտրական օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանող տեղամասային կենտրոնի ընտրության նպատակով:

(Ընտրական օրենսգիրք, 16-րդ հոդված, 3-րդ մաս)

Հարց 55. Ե՞րբ է քրեակատարողական հիմնարկի պետը սահմանում տեղամասային կենտրոն և ու՞մ է այդ մասին տեղեկացնում՝

- ✓ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ սահմանում է տեղամասային կենտրոն և այդ մասին տեղեկացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

(Ընտրական օրենսգիրք, 18-րդ հոդված, մաս 1)

Հարց 56. Ի՞նչ կարգով և ժամկետում են լրացվում տեղամասային ընտրական հանձնաժողովի թափուր տեղերը, եթե որևէ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) հանձնաժողովի ձևավորման համար սահմանված կարգով կամ ժամկետում հանձնաժողովի անդամ չի նշանակում՝

- ✓ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից՝ հանձնաժողովի կազմավորման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 3)

Հարց 57. Տեղամասային ընտրական հանձնաժողովի թափուր տեղերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից լրացվելու դեպքում՝ փոփոխվում է արդյո՞ք տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների՝ ըստ տեղամասերի բաշխման մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը՝

✓ ոչ, չի փոփոխվում՝ անգամ այն դեպքում, երբ թափուր տեղի լրացման արդյունքում որոշմամբ սահմանված համամասնությունը խախտվել է:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 3)

Հարց 58. Եթե քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին, մինչև 1 000 ընտրող ունեցող ընտրական տեղամասի դեպքում 5-ից պակաս թվով տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ է ներկայացել, ապա չներկայացած անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարում են, և անդամների թիվը՝

✓ մինչև 5 անդամ լրացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 10)

Հարց 59. Եթե քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին, 1 000-ից ավելի ընտրող ունեցող ընտրական տեղամասի դեպքում 7-ից պակաս թվով տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ է ներկայացել, ապա չներկայացած անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարում են, և անդամների թիվը՝

✓ մինչև 7 անդամ լրացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 10)

Հարց 60. Եթե քվեարկության օրը՝ ժամը 9.00-ի դրությամբ, տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա անդամների թիվը նվազ է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի 2/3-ից, ապա հանձնաժողովի կազմը համալրվում է այնպես, որ ապահովվի հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի՝

✓ 2/3-ը:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 10)

Հարց 61. Առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակվելու դեպքում՝

✓ այդ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարած, և նրանք չեն կարող ընդգրկվել վերաքվեարկություն անցկացնող տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 13)

Հարց 62. Վերաքվեարկություն անցկացվելու դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովների նոր նշանակումներ կատարելու համար հայտերը ներկայացվում են վերաքվեարկություն նշանակելու մասին որոշումն ընդունելուց հետո՝

✓ 3 օրվա ընթացքում՝ մինչև ժամը 18.00-ն:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 13)

Հարց 63. Ե՞րբ է կայանում տեղամասային ընտրական հանձնաժողովների առաջին նիստը վերաքվեարկություն անցկացվելու դեպքում՝

✓ կազմավորման ժամկետի ավարտի հաջորդ օրը՝ ժամը 12.00-ին:

(Ընտրական օրենսգիրք, 44-րդ հոդված, մաս 13)

Հարց 64. Ե՞րբ կարող են վաղաժամկետ դադարեցվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները՝

✓ եթե 2 օրացուցային ամսվա ընթացքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հերթական նիստերից երեք կամ ավելի անգամ անհարգելի բացակայել է:

(Ընտրական օրենսգիրք, 45-րդ հոդված, մաս 7)

Հարց 65. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել՝

✓ կրկնակի ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշում ընդունված լինելու դեպքում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:

(Ընտրական օրենսգիրք, 45-րդ հոդված, մաս 7)

Հարց 66. Ի՞նչ կարգով և ժամկետում է հրավիրվում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի արտահերթ նիստը՝

✓ հանձնաժողովի անդամների առնվազն 1/3-ի գրավոր պահանջով նրանց նշած ժամկետում:

(Ընտրական օրենսգիրք, 46 հոդված, մաս 3)

Հարց 67. Ի՞նչ ժամկետում պետք է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտը փակցվի բոլորի համար տեսանելի տեղում՝

✓ *ակտն ընդունելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:*

(Ընտրական օրենսգիրք, 47-րդ հոդված, մաս 6)

Հարց 68. Ի՞նչ ժամկետում և կարգով է ընտրական հանձնաժողովի վարչական ակտն ուղարկվում վարչական վարույթի մասնակիցներին՝

✓ եռօրյա ժամկետում, առաքման անդորրագիրը կցելով գործին, եթե այդ ակտը վարույթի մասնակիցները հանձնաժողովում չեն ստացել:

(Ընտրական օրենսգիրք, 47-րդ հոդված, մաս 7)

Հարց 69. Ու՞մ է ուղարկվում վարչական ակտը, եթե դիմումը ներկայացվել է մեկից ավելի դիմումատուների կողմից համատեղ՝

✓ ընդունված վարչական ակտն ուղարկվում է դիմումում առաջինը նշված դիմումատուին:

(Ընտրական օրենսգիրք, 47-րդ հոդված, մաս 7)

Հարց 70. Քվեարկության օրվա ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները ե՞րբ են ներկայացվում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝

✓ քվեարկության օրը՝ ժամը 8.00-ից մինչև ժամը 22.00-ն:

(Ընտրական օրենսգիրք, 48-րդ հոդված, մաս 4)

Հարց 71. Ի՞նչ ժամկետում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ընտրությունները նշանակվելուց հետո՝ մինչև քվեարկության նախորդ օրը, ստացված դիմումներին պատասխանում՝

✓ *հնգօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև քվեարկության սկիզբը:*

(Ընտրական օրենսգիրք, 48-րդ հոդված, մաս 7)

Հարց 72. Ի՞նչ ժամկետներում պետք է քննարկվի ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու մասին դիմումը՝

✓ *դիմումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 12-00-ն:*

(Ընտրական օրենսգիրք, 48-րդ հոդված, մաս 11)

Հարց 73. Ի՞նչ կարգով է կատարվում ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը՝

✓ ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում:

(Ընտրական օրենսգիրք, 48-րդ հոդված, մաս 15)

Հարց 74. Ի՞նչ ժամկետում կարող է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ վերահսկողության կարգով վերանայել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը

✓ վեց ամսվա ընթացքում:

(Ընտրական օրենսգիրք, 48.1-րդ հոդված, մաս 1)

Հարց 75. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ո՞ր որոշումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վերահսկողության կարգով **ՉԻ** կարող վերանայել

✓ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակը (դրանցում ընդգրկված թեկնածուներին) գրանցելու վերաբերյալ որոշումը:

(Ընտրական օրենսգիրք, 48.1-րդ հոդված, մաս 1)

Հարց 76. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ո՞ր որոշումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վերահսկողության կարգով **ՉԻ** կարող վերանայել՝

✓ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակի (դրանցում ընդգրկված թեկնածուների) գրանցումը մերժելու վերաբերյալ որոշումը:

(Ընտրական օրենսգիրք, 48.1-րդ հոդված, մաս 1)

Հարց 77. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ո՞ր որոշումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վերահսկողության կարգով **ՉԻ** կարող վերանայել՝

✓ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակի (դրանցում ընդգրկված թեկնածուի) գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումը:

(Ընտրական օրենսգիրք, 48.1-րդ հոդված, մաս 1)

Հարց 78. Ի՞նչ կարգով է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քննարկում դիմումատուի վերաբերյալ տվյալներ չներառող կամ ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները՝

✓ այդ դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովը որոշում է կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին:

(Ընտրական օրենսգիրք, 49-րդ հոդված, մաս 1)

Հարց 79. Եթե հանձնաժողովի որևէ անդամ վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման նախագիծ չի ներկայացնում, ապա՝

✓ վարչական վարույթը համարվում է հարուցված:

(Ընտրական օրենսգիրք, 49-րդ հոդված, մաս 4)

Հարց 80. Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում ո՞ր տվյալներն են համարվում ելակետային՝

✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից հատ-հատ հաշվելու միջոցով ստացված տվյալները:

(Ընտրական օրենսգիրք, 73-րդ հոդված, մաս 1)

Հարց 81. Ի՞նչ կարգով են ուղղվում ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում թվաբանական սխալները՝

✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով:

(Ընտրական օրենսգիրք, 73-րդ հոդված, մաս 1)

Հարց 82. Ո՞ր ընտրությունների ժամանակ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրություն չի կազմում՝

✓ Ազգային ժողովի, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ:

(Ընտրական օրենսգիրք, 73-րդ հոդված, մաս 5)

Հարց 83. Թվարկված գործողություններից ո՞րն է իրականացնում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝

✓ ուսումնասիրում է տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումները:

(Ընտրական օրենսգիրք, 73-րդ հոդված, մաս 5)

Հարց 84. Ե՞րբ կարող է ներկայացվել վերահաշվարկի մասին դիմում՝

✓ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

(Ընտրական օրենսգիրք, 50-րդ հոդված, մաս 1)

Հարց 85. Վերահաշվարկի դիմում ներկայացվում է՝

✓ միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

(Ընտրական օրենսգիրք, 50-րդ հոդված, մաս 1)

Հարց 86. Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է՝

✓ ընտրության արդյունքների վերաբերյալ որոշում ընդունելիս՝ ձայների հավասարության դեպքում:

(Ընտրական օրենսգիրք, 46-րդ հոդված, մաս 5)

Հարց 87. Ե՞րբ է ուժի մեջ մտնում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտը՝

✓ նիստում հրապարակվելու պահից:

(Ընտրական օրենսգիրք, 47-րդ հոդված, մաս 6)

Հարց 88. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում դիմումի քննարկման մասին դիմումատուն համարվում է ծանուցված՝

✓ դիմումի քննարկման օրվա և ժամի մասին հանձնաժողովում բոլորի համար տեսանելի տեղում ծանուցում փակցնելու միջոցով:

(Ընտրական օրենսգիրք, 47-րդ հոդված, մաս 2)

Հարց 89. Վարչական վարույթ իրականացնող հանձնաժողովի անդամն իրավունք **ՉՈՒՆԻ՝**

✓ ինքնաբացարկ հայտնելու:

(Ընտրական օրենսգիրք, 47-րդ հոդված, մաս 3)

Հարց 90. Եթե ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար դիմում ներկայացրած քաղաքացիների թիվը բավարար չէ տարբեր սեռերի հավասարության չափանիշի պահպանման համար, ապա հանձնաժողովի անդամների թափուր տեղերը՝

✓ լրացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ անցած և որակավորման վկայականներ ստացած քաղաքացիներից:

(Ընտրական օրենսգիրք, 43-րդ հոդված, մաս 8)

Հարց 91. Ի՞նչ ժամկետում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում համալրում թափուր տեղը՝

✓ 21-օրյա ժամկետում:

(Ընտրական օրենսգիրք, 43-րդ հոդված, մաս 9)

Հարց 92. Ե՞րբ է նոր կազմավորված ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն իր լիազորություններն ստանձնում՝

✓ գործող ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի լիազորությունների ավարտման օրը՝ ժամը 12.00-ին:

(Ընտրական օրենսգիրք, 43-րդ հոդված, մաս 11)

Հարց 93. Ի՞նչ ժամկետով է նշանակվում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նոր անդամը՝

- ✓ նախկին անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետով:

(Ընտրական օրենսգիրք, 43-րդ հոդված, մաս 3)

Հարց 94. Ո՞վ **ՉԻ** կարող լինել ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ՝

- ✓ ավագանու անդամի թեկնածուի լիազոր ներկայացուցիչը:

(Ընտրական օրենսգիրք, 41-րդ հոդված, մաս 2)

Հարց 95. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամներն իրենց լիազորությունների իրականացման նպատակով ազատվում են ծառայողական (աշխատանքային) պարտականությունները կատարելուց՝

- ✓ սեփական նախաձեռնությամբ:

(Ընտրական օրենսգիրք, 39-րդ հոդված, մաս 9)

Հարց 96. Վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները ստորադաս ընտրական հանձնաժողովի նիստերին՝

- ✓ մասնակցում են վերադաս հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ:

(Ընտրական օրենսգիրք, 39-րդ հոդված, մաս 8)

Հարց 97. Ո՞ր մարմինն է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին անհատույց ապահովում անհրաժեշտ աշխատանքային տարածքներով և գույքով:

- ✓ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները:

(Ընտրական օրենսգիրք, 36-րդ հոդված, մաս 6)

Հարց 98. Ընտրական հանձնաժողովների իրավական ակտերը՝

- ✓ ենթակա են պարտադիր կատարման:

(Ընտրական օրենսգիրք, 38-րդ հոդված, մաս 2)

Հարց 99. Ի՞նչ իրավական ակտ կարող է ընդունել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:

- ✓ անհատական:

(Ընտրական օրենսգիրք, 38-րդ հոդված, մաս 1)

Հարց 100. Ի՞նչ գործառույթներ ունեն ընտրական հանձնաժողովները:

- ✓ ապահովում են ընտրողների ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը:

(Ընտրական օրենսգիրք, 37-րդ հոդված, մաս 1)

Հարց 101. Ո՞վ է հաստատվում մարզերում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեաթերթիկների նմուշները՝

- ✓ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

(Ընտրական օրենսգիրք, 52-րդ հոդված, մաս 1, կետ 2)

Հարց 102. Ո՞վ է սահմանում ընտրական տեղամասերի հերթական համարները՝

- ✓ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները:

(Ընտրական օրենսգիրք, 52-րդ հոդված, մաս 1, կետ 3)

Հարց 103. Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոքաբերի ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է՝

- ✓ բողոք ներկայացնող կողմը:

(Ընտրական օրենսգիրք, 49-րդ հոդված, մաս 6)

Հարց 104. Ի՞նչ իրավունք **ՉՈՒՆԻ** անել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում հարուցված վարչական վարույթի մասնակիցը՝

- ✓ բացարկ հայտնել հանձնաժողովի անդամին:

(Ընտրական օրենսգիրք, 47-րդ հոդված, մաս 3)

Հարց 105. Ընտրական հանձնաժողովի վարչական ակտն ընդունելուց հետո ո՞ւմ է ուղարկվում՝

- ✓ դիմումում առաջինը նշված դիմումատուին:

(Ընտրական օրենսգիրք, 47-րդ հոդված, մաս 7)

Հարց 106. Բողոքը քննող ընտրական հանձնաժողովը՝

- ✓ ի պաշտոնե կարող է ապացույցներ հայթայթել:

(Ընտրական օրենսգիրք, 49-րդ հոդված, մաս 6)

Հարց 107. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով քարոզչական պաստառը կարող է տեղադրվել միայն՝

- ✓ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես բաշխված արտաքին գովազդային վահանակներում:

(Ընտրական օրենսգիրք, 21-րդ հոդված, մաս 6)

Հարց 108. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում ընդունում է՝

- ✓ անհատական իրավական ակտեր:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 35-Ն որոշում, Հավելված, կետ 4)

Հարց 109. Ո՞վ է սահմանում յուրաքանչյուր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների թիվը՝

✓ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 35-Ն որոշում, Հավելված, կետ 7)

Հարց 110. Ու՞մ է պատկանում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի, տեղակալի և քարտուղարի թեկնածուների առաջադրման իրավունքը՝

✓ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամներին:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 35-Ն որոշում, Հավելված, կետ 12)

Հարց 111. Ո՞վ է ներկայացնում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը և ապահովում նրա բնականոն գործունեությունը՝

✓ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը,

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 35-Ն որոշում, Հավելված, կետ 16, ենթակետ 1)

Հարց 112. Ո՞վ է ապահովում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ստացված դիմումների, բողոքների հետ տարվող աշխատանքը՝

✓ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 35-Ն որոշում, Հավելված, կետ 17, ենթակետ 3)

Հարց 113. Ո՞վ է նախապատրաստում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստերը և ապահովում դրանց հրապարակայնությունը՝

✓ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղարը:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 35-Ն որոշում, Հավելված, կետ 19, ենթակետ 1, 4)

Հարց 114. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

✓ ներկայացնելու առաջարկություններ և պահանջելու, որ այդ հարցով անցկացվի քվեարկություն:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 35-Ն որոշում, Հավելված, կետ 22, ենթակետ 3)

Հարց 115. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է՝

✓ կատարել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի՝ իր իրավասության սահմաններում տված հանձնարարությունները:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 35-Ն որոշում, Հավելված, կետ 23, ենթակետ 1)

Հարց 116. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե՝

✓ նիստին ներկա է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 35-Ն որոշում, Հավելված, կետ 34)

Հարց 117. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումներն ընդունվում են՝

✓ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի իրավազոր նիստում՝ բաց քվեարկությամբ:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 35-Ն որոշում, Հավելված, կետ 46)

Հարց 118. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը քվեարկում է՝

- ✓ անձամբ՝ կողմ կամ դեմ:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 35-Ն որոշում, Հավելված, կետ 46)

Հարց 119. Դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին, վստահված անձին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստից հեռացնելու արձանագրային որոշումն ընդունվում է՝

- ✓ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 35-Ն որոշում, Հավելված, կետ 39)

Հարց 120. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները ենթակա են՝

- ✓ ամենամյա պարտադիր ատեստավորման:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 33-Ն որոշում, Հավելված 1, կետ 3)

Հարց 121. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ձևավորում է ատեստավորման հանձնաժողով, որը կազմված է՝

- ✓ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի առնվազն հինգ անդամից:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 33-Ն որոշում, Հավելված 1, կետ 11)

Հարց 122. Ատեստավորման հանձնաժողովն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ատեստավորման արդյունքներով կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը՝

- ✓ չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

(ԿԸՀ 28.03.2025 թ. N 33-Ն որոշում, Հավելված 2, կետ 21)

Հարց 123. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ, եթե քվեարկությանը մասնակցում է միայն մեկ կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա՝

- ✓ տպագրվում է նաև դեմ քվեարկությամբ առանձին քվեաթերթիկ:

(ԿԸՀ 27.03.2025 թ. N 26-Ն որոշում, Հավելված, կետ 2)

Հարց 124. Քվեաթերթիկները տպագրելուց հետո համայնքի ղեկավարի թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում՝

- ✓ այդ թեկնածուի անունը քվեաթերթիկներից հանվում է, մինչև այն ընտրողին հանձնելը՝ հորիզոնական գիծ քաշելով տվյալ թեկնածուի տվյալները պարունակող համապատասխան տողի վրա:

(ԿԸՀ 27.03.2025 թ. N 26-Ն որոշում, Հավելված, կետ 3)

Հարց 125. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից լրացուցիչ վիճակահանություն չի իրականացվում՝

- ✓ վերահաշվարկի դիմումներով, սեփական նախաձեռնությամբ վերահաշվարկվող և վիճակահանության արդյունքով ընտրված ընտրական տեղամասերի համընկնման դեպքում:

(ԿԸՀ 27.03.2025 թ. N 27-Ն որոշում, Հավելված, կետ 13)

Հարց 126. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից անցկացվող բոլոր վիճակահանությունների արդյունքները՝

- ✓ գրառվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

(ԿԸՀ 27.03.2025 թ. N 27-Ն որոշում, Հավելված, կետ 15)